ԱՐԵԳ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան, ասպիրանտ
vardanyanareg1@yahoo.com
ID 0009-0002-8862-8590
DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-27

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻՆ ԵՎ ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ XI Դ. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Բանալի բառեր՝ Արիստակես Լաստիվերցի, Սամուել Անեցի, Հովհաննես Կոզեռն, Անիի անկում, Հայաստանը XI դարում, Ռուբինյաններ:

Ներածություն

Հայոց պատմության առանցքային իրադարձություններից են 1045 թ. Անիի շուրջ ծավալված ռազմաքաղաքական իրողությունները: Դրանք մանրամասն նկարագրվել են Արիստակես Լաստիվերցու պատմական երկում: Հետագայում պատմագիտությունը հիմնականում հիմք է ընդունել Լաստիվերցու նկարագրությունները[1]:

* *Ներկայացվել է 07.I.2024 թ., գրախոսվել է 10.I.2024 թ., ընդունվել է տպագրության 07.VI.2024 թ.:*

[1] **Օրմանեան.** 2001, 1430-1438: **Լեո.** 1967, 651, 672-681 և այլն: **Մանանդյան.** 1977, 24-30: Հայ ժողովրդի պատմություն. 1976, 149-154 և այլն: Բացառություն են կազմում **Հ. Բարթիկյանը** և **Կ. Մաթևոսյանը**: Թեպետ երկու հետազոտողներն էլ ներկայացնում են տարբեր մեկնաբանություն, նրանք հեռու են Լաստիվերցու շարադրանքի կրկնությունից, տե՛ս

Այդուհանդերձ, միջնադարում եղել է այս իրողության պատմագրական ներկայացման մեկ այլ ավանդույթ ևս և, ինչն առավել ակնառու է, այն շատ առումներով հակադիր է եղել Արիստակես Լաստիվերցու ներկայացմանը: Ցավոք, այս ավանդույթից մեզ են հասել սոսկ կցկտուր տեղեկություններ, սակայն Լաստիվերցու պատումի հետ դրանց համադրումն ի հայտ է բերում էական տարբերություններ: Դրանք ավելի հստակ ցույց տալու համար նախ ներկայացնենք քննության առարկա աղբյուրների տեղեկությունները և ապա անցնենք դրանց համեմատությանը:

Սամուել Անեցու տեղեկությունները

Ըստ Սամուել Անեցու[2], Հովհաննես-Սմբատի մահվանից հետո «միաբանեալ ազատագունդ զաւրացն եւ իշխանացն, յաւէտ եւս պատրիարգին տեառն Պետրոսի»[3] Գագիկ Բ-ին (1042-1045) կարգեցին Հայոց թագավոր: Սակայն նա «ո՛չ պատերազմական արութեանց ջանայր, որով վարի իշխանութիւնն, մանաւանդ զի առ այնու ժա-

---

Բարթիկյան. 1988, 77-84: Հայոց պատմություն. 2014, 158-160: **Մաթեւոսյան.** 2015, 36-83:

[2] Հարկ է նշել, որ Սամուել Անեցու տեսակետների անհամապատասխանությունը Լաստիվերցու տեսակետների հետ նկատել է Անեցու երկի քննական բնագրի աշխատասիրող Կ. Մաթևոսյանը, տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 394:

[3] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 186:

մանական աւելի իմն զդէպ էր քաջանալ»[4], քանզի հաճախացել էին սելջուկյան հարձակումները, ընդ որում՝ նաև Բյուզանդիայի դեմ. «Բայց սա զի ի մանկութենէ ընդ դպրութեան գրոց վարժեալ էր, ի նոսին զբաւսնոյր ու ի տերութեան աւուրս, զոր իմացեալ ազգին Յունաց, առ իւրեանս կոչեցին խաբկանաւք»[5]:

Ըստ Սամուել Անեցու ստացվում է, որ Գագիկ Բ-ի շուրջը եղել է իշխանների և կաթողիկոսի միություն, սակայն նա, լինելով անարի գործիչ և անտեղի գրասիրությամբ տարված մեկը, զոհ է գնացել բյուզանդական խարդավանքին: Անեցին ավելացնում է, որ այս ամենը տեղի է ունեցել «ի սադրելոյ իշխանացն, որք երդմամբ հաստատեցին պահել զիշխանութիւն նորա աննենգ ի վերայ իւրեանց»[6], որոնք այս ամենից հետո անհանգստություններ հրահրեցին և ջանում էին «մատնել զմիմեանս կայսեր»[7], ապա պատրաստվում էին անգամ «զձեռն տալն առ Հագարացիսն որք եւ իշխանացն, անգամ զհայրապետն»[8], այսինքն՝ Պետրոս Գետադարձին: Ստացվում է, որ Գագիկի մեկնելուց հետո խռովություններ են եղել, որի հետևանքով Պետրոս Գետադարձի անվտանգությունը դրվել է հարցականի տակ:

---

[4] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 186:
[5] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 186:
[6] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 186:
[7] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 186:
[8] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 186:

Արիստակես Լաստիվերցու տեղեկությունները

Լաստիվերցու համաձայն, Հովհաննես-Սմբատի մահվանից հետո Վեստ Սարգիսը նպատակ է դնում թագավոր դառնալ, սակայն Վահրամ Պահլավունին իր ազգականների և ազատների հետ «ոչ միաբանեցան ընդ նմա. այլ կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, եւ իմաստութեամբ եւ հնարիւք մուծին ի քաղաքն» [9]: Իր ծրագրի խափանումից հետո Վեստ Սարգիսը «զգանձս թագաւորութեանն առեալ ի ներքին ամուրն մտանէ՝ յանառն Անի: Այլ Գագիկ այրական քաջասրտութեամբ միայն իջեալ առ նա եւ ողոքական բանիւք հաւանեցուցանէ զնա»[10]: Սակայն Սարգիսը շարունակում է դիմադրել և փախչում է Սուրմառի:

Ի վերջո, Գագիկը ձերբակալում է Սարգսին, բայց խնայում է նրա կյանքը: Այստեղ Լաստիվերցին կատարում է հետաքրքիր հավելում, որը ցույց է տալիս նրա վերաբերմունքը դեպի Վեստ Սարգիսը. «Եւ զոր պարտ էր զապստամբն բառնալ ի կենաց, նա զՍաւուղայն խորհեցաւ, զերկրորդ Ագագ խնայեալ… վասն որոյ զՍաւուղայն ընկալաւ զհատուցումն, կեանք, որ քան զմահ դառնագոյն էին»[11]:

---

[9] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 557:

[10] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 558:

[11] **Արիստակէս Լաստիվերցի**. 2012, 558:

Պատմիչի այս խոսքը Հին Կտակարանի իրադարձություններին է վերաբերում: Տերը Սավուղից պահանջում է բնաջնջել Ամաղեկը, սակայն Սավուղը խղճում է նրանց արքա Ագագին: Չհպատակվելով տերունական հրամանին՝ Սավուղը զրկվում է նրա հովանավորությունից: Տիրոջ հովանավորությունն անցնում է Դավթին և վերջինիս թագավոր դառնալու ճանապարհ հարթում: Դավթի հզորացումը Սավուղին պատճառում է հոգեկան տվայտանքներ[12]: Իր կյանքի հետագա տարիները թագից զրկված և մտատանջության մեջ ապրող Գագիկին Սավուղի հետ համեմատելով՝ Լաստիվերցին խոր հակակրանք է ցուցաբերում Վեստ Սարգսի հանդեպ, վերջինիս համեմատելով Հին Կտակարանից հայտնի բացասական անհատի հետ:

Շարունակելով իր շարադրանքը՝ Լաստիվերցին անցնում է Անիի անկման հանգամանքներին, շեշտելով, որ դա, ոչ թե պատերազմի պատճառ էր, այլ «պատիր բանի»[13]: Գագիկը չի լսում Վահրամ Պահլավունու հորդորը և տրվելով Վեստ Սարգսի խարդավանքին՝ քաղաքի բանալիները հանձնում է Պետրոս Գետադարձին: Այսպիսով՝ Գագիկն ընկնում է կայսեր հյուսած ծուղակը: Այն շատ պարզ էր. Գագիկից ընդամենը պահանջվում էր ներկայանալ կայսերը, նրանից հաստատում ստանալ և վերադառնալ հայրենիք՝ իշխելու իր թագավորությու-

[12] **Ա Թագ.** 15, 16:

[13] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 561:

նում: Այն, որ կայսրը Գագիկից այլ բան չի պահանջելու, հաստատվում էր «երդմամբ եւ խաչիւ»[14]:

Լաստիվերցին չգիտի, թե ինչու է Գագիկն ընկնում այս ծուղակը. «Հաւատաց վասն երդմանցն եւ խաչին, եթէ վասն խակութեան մտացն, եթէ վասն երկիւղածութեան բարուցն, ո՛չ գիտեմ»[15], - տարակուսելով գրում է նա: Այսպիսով՝ Գագիկը դառնում է արքունի պատանդ, որին Բյուզանդիայի տարածքում առաջարկում են կալվածքներ և ամուսնացնում Սենեքերիմ Արծրունու թոռնուհու հետ[16]: Ինչ վերաբերում է Անիին, ապա քաղաքացիները մտադրվում են հարակից տիրակալներից որևէ մեկին հրավիրել՝ տիրելու Բագրատունյաց հռչակավոր մայրաքաղաքին: Նրանք էին՝ Դավիթ Անհողինը, Դվինի ամիրան ու Ափխազաց և Վրաց թագավոր Բագրատ Դ-ն[17]: Պետրոս Գետադարձն այս մտադրության մասին իմանալով, Սամուսատի բյուզանդական կառավարչին գրում է. «Ծանո՛ թագաւորին, թէ մեզ զի՛նչ հատուցանէ փոխարենս եւ ես տաց զքաղաքս եւ զայլ ամուրս, որ յաշխարհիս են»[18]: Կայսրը «գանձիւք եւ իշխանութեամբ»[19] առատորեն հատուցում է Գետադարձին, և Անին իր

---

[14] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 561:
[15] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 561:
[16] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 561-562:
[17] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 561-562:
[18] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 562:
[19] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 562:

շրջակայքով անցնում է Բյուզանդիային[20]:

Ակներև է, որ այս երկու պատումներում գործող անձինք և իրադարձությունները նույնն են, իսկ որակումները՝ տարբեր: Անեցու մոտ Գագիկ Բ-ը թուլամորթ է և իշխելու անարժան, իսկ Լաստիվերցին նրան արի և քաջ է կոչում: Ավելին, նա անգամ վարանում է Գագիկի Բյուզանդիա մեկնելու որոշումը վստահորեն վախկոտություն որակել : Անեցու շարադրանքում Պետրոս Գետադարձն է իշխանների հետ թագադրել Գագիկ Բ-ին, մինչդեռ Լաստիվերցու հանաձայն՝ նախաձեռնությունը Վասակ Պահլավունունն է: Ի դեպ, Վասակ Պահլավունին ընդհանրապես բացակայում է Անեցու մոտ, սակայն վերջինս խոսում է Վեստ Սարգսից, ում հատկացնում է կարճառոտ, սակայն փառաբանական տողեր՝ նրան ներկայացնելով իբրև նշանավոր բարերարի[21]: Ինչ վերաբերում է Լաստիվերցուն, ապա Սարգսի նկատմամբ նրա վերաբերմունքը, ինչպես տեսանք, ծայրաստիճան բացասական է:

Կոզեռնի «տեսիլը»

Անեցու պատմությունը Լաստիվերցուն հակասող միակ հայկական աղբյուրը չէ: Մեզ է հասել միջնադարյան մի բնագիր, որը ձեռագրերում ավանդված է Լաստիվերցու հայտնի ժամանակակից, վարդապետ Հով-

---

[20] **Արիստակէս Լաստիվերցի.** 2012, 562:

[21] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 183-184:

հաննես Կոզեռնի անվամբ: Այս բնագիրն ունի մի քանի տարբերակ: Մենք կանդրադառնանք, այսպես կոչված, «բյուզանդամետ» տարբերակին: Արդեն վաղուց է նկատվել, որ այս տարբերակը որոշ առումներով տարբերվում է նույն Կոզեռնին վերագրվող «տեսիլի» մեկ այլ տարբերակից, որը հայտնի է Ուռհայեցու երկի էջերից[22]: Լ. Խաչիկյանը ցույց է տվել, որ, ամենայն հավանականությամբ, Կոզեռնն այս վախճանաբանական բնագրի հետ կապվել է իբրև աստղագիտական գիտելիքների տեր վարդապետ[23]: Բնագրի՝ մեզ հետաքրքրող հատվածում նկարագրվում է, թե ինչպես է տեղի ունեցել Պետրոս Գետադարձի հայտնի «հրաշագործությունը»: Վասիլ Բ կայսեր (976-1025) և Գետադարձի հանդիպման շրջանակներում եկեղացապետն օրհնում է գետի ջուրը, ինչին հետևում է «հուր» և «փայլակ» հիշեցնող նշան: Բյուզանդացի հոգևորականներն ի պատասխան աղավնի են բաց թողնում: Սակայն աղավնին դառնում է արծվի զոհը: Գետադարձի «հրաշագործությունն» այնքան է ազդում Վասիլ Բ-ի վրա, որ նա, գնալով Սև լեռան հայոց վանքերից մեկը, գալիս է հայոց հավատին և դառնում հայ ազգի «հայրը»[24]:

Արիստակես Լաստիվերցու պատմության մեջ էլ անդ-

---

[22] **Հովհաննիսյան.** 1957, 40-48: **Մարր.** 1895, 9-34. **Խաչիկյան.** 2012, 165-200: **Andrews.** 2017, 30-37.

[23] **Խաչիկյան.** 2012, 172-173:

[24] **Խաչիկյան.** 2012, 172-173:

ռադարձ կա այս դրվագին, սակայն նորից՝ այլ լույսի ներքո: Ինչպես և Կոզեռնի «տեսիլում», այստեղ ևս Պետրոս Գետադարձը և Վասիլ Բ-ը հանդիպում են, և տեղի է ունենում «հրաշագործությունը». «. . . լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն»[25]: Սակայն սրանից հետո Լաստիվերցին ավելացնում է մի աներկբա արտահայտություն. «եւ բարձրացաւ եղջիւր հաւատոյս մերոյ: Եւ եւս առաւել պատուով մեծարեալ ի թագաւորէն եւ ի սպահիցն՝ հայրապետն Պետրոս դառնայ ի տուն իւր: Բայց անդ եղեւ Հայոց կորստեան գիր եւ նամակ, քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին»[26] իր մահվանից հետո իր երկիրը հանձնել Բյուզանդիային:

Այսպիսով, չնայած Լաստիվերցին Կոզեռնի «տեսիլի» հեղինակի հետ համամիտ է առ այն, որ Գետադարձի և Վասիլ Բ-ի հանդիպումը հավատի տեսանկյունից դրական էր, դրա քաղաքական հետևանքների առումով նրանց ընկալումները տրամագծորեն տարբեր են: Եթե «տեսիլի» հեղինակը «հրաշագործությունից» հետո հայության քաղաքական խնդիրների լուծումը բացատրում է Վասիլի Բ-ի՝ հայ ազգի «հայր» դառնալով, ապա Լաստիվերցին արձանագրում է հայոց քաղաքական անկման սկիզբը: Այս երկու արտահայտությունների գաղափարական ներհակությունն ավելի ակնբախ է, եթե նկա-

[25] **Արիստակէս Լաստիվերցի.** 2014, 535:

[26] **Արիստակէս Լաստիվերցի.** 2014, 535:

տի առնենք հետևյալ նշանակալից հանգամանքը. Վասիլ Բ-ը հայ մատենագրության մեջ ընկալվում էր իբրև հզոր քրիստոնյա արքա, որը հաջողությամբ իր երկիրը պաշտպանում էր մուսուլմանների հարձակումներից և պետք եղած դեպքում նվաճում նրանց տարածքները[27]: Այսպիսով՝ նրա հայոց «հայր» դառնալը կարելի է իբրև հայերի՝ Բյուզանդական կայսրության քաղաքական տիրապետության դաշտ մտնել մեկնաբանել: Տարօրինակ այս տեսակետի պաշտպան հեղինակի համար մի սկզբունքային պայման կա, որի դեպքում այս խաղաղ նվաճումն իրավական է. սեփական թագավորությունից զրկված հայերը պետք է պահեն իրենց կրոնական նկարագիրը: Եթե Վասիլը թեկուզև գաղտնի ընդունում է հայոց դավանանքը, ապա հայերը «հանգիստ խղճով» կարող են հրաժարվել քաղաքական անկախությունից: Այսպիսով՝ «տեսիլի» հեղինակը, Վասիլին դարձնելով հայադավան, իրավական հիմք է փորձում հաղորդել Բյուզանդական նվաճմանը: Ահա, այս մոտեցմանն է ընդդիմանում Լաստիվերցին՝ արձանագրելով, որ Վասիլ Բ-ի և Պետրոս Գետադարձի հանդիպումը թեպետ հավատի

[27]Մահեի առաջարկած տեսակետը, ըստ որի պայմանական «բյուզանդասիրությունը» հատուկ էր Վասպուրականի կամ «Հարավային Հայաստանի» տիրակալներին և խորթ Շիրակի Բագրատունիներին (**Mahé.** 1991, 562-564, 571-572), համոզիչ չէ, եթե հաշվի առնենք Լաստիվերցու դրական վերաբերմունքը Վասիլ Բ-ի նկատմամբ (Լաստիվերցու կողմից Վասիլ կայսեր նկատմամբ դրական վերաբերմունքի մասին մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան.** 1957, 43-44):

խնդիրների տեսնակյունից հաղթանակ էր, սակայն պետականության տեսանկյունից՝ պարտություն:

Վերլուծության համակողմանիության համար պետք է նաև պարզել, թե որտեղից կարող էր գալ Լաստիվերցուն հակադիր այս տեսակետը: Եթե անգամ ընդունենք Լևոն Խաչիկյանի վարկածը[28], որ Կոզեռնի «տեսիլը» գալիս է Լաստիվերցու ժամանակակից Հակոբ Սանահնեցու կորուսյալ երկից, նույնը չենք կարող ասել Անեցու դեպքում, քանզի նա գործել է XII դ. երկրորդ կեսին և իր երկը գրել Գրիգոր Գ Պահլավունու պատվերով[29]: Այսպիսով, հարց է ծագում, թե Անեցին որտեղի՞ց կարող էր քաղած լինել իր տեղեկությունները, և ինչո՞ւ են դրանք այդքան տարբերվում Լաստիվերցու պատմածից: Եթե համարենք, որ Անեցու օգտագործած պատմական երկի հեղինակը մեզ հայտնի պատմիչ է, ապա, Հակոբ Սանահնեցուց բացի, կա ևս երկու կորուսյալ պատմություն՝ Հովհաննես Կոզեռնի[30] և Հովհաննես Սարկավագի հեղինակությամբ[31]: Այս երեք հեղինակներից խնդրո առարկա իրադարձություններին ականատես կարող էին

---

[28] **Խաչիկյան.** 2012, 165-200:

[29] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ.** 2014, 3, 10-11:

[30] Երկից հասել է մի պատառիկ, որ հրատարակվել է Մատենագիրք Հայոց շարքի շրջանակներում (հ. ԺԶ., էջ 70-78):

[31] Անեցու պատմությունից իմանում ենք նաև, որ նա օգտվել է միայն այս՝ ներկայումս կորուսյալ պատմական երկից, սակայն այն վերաբերել է սելջուկների նախապատմությանը և Մելիք շահի շրջանին, տե՛ս **Մաթեւոսյան.** 2005, 122-131:

լինել միայն Հակոբ Սանահնեցին և Հովհաննես Կոզեռ-նը: Սակայն Սանահնեցին քիչ հայտնի հեղինակ է, ինչը չի կարելի ասել Կոզեռնի մասին: Նույն Սամուել Անեցու կրտսեր ժամանակակից Մխիթար Անեցին իր աղբյուր-ների շարքում նշում է Կոզեռնին[32]: Հաշվի առնելով այն, որ Կոզեռնը հանդես է գալիս նաև «տեսիլ»-ում ու Սա-նահնեցու դրվագում, կարող ենք ենթադրել, որ Լաստի-վերցու հակադիր տեսակետը պատկանում է Կոզեռնին կամ նրա շրջանակին: Ակնհայտ է, որ քաղաքական առումով այս շրջանակը սպասարկում էր Պետրոս Գետադարձի բյուզանդամետ քաղաքական գիծը:

Եզրակացություններ

Նախընթաց շարադրանքում փորձեցինք մատնացույց անել մի կողմից Լաստիվերցու, մյուս կողմից՝ Անեցու և Կոզեռնի «տեսիլ»-ի հեղինակի խորքային տարակար-ծությունը 1045 թ. Անիի շուրջ ծավալված իրադարձութ-յունների կապակցությամբ: Այսպիսով՝ ի հայտ է գալիս Լատիվերցու երկի կերտման գաղափարական հետնա-խորքերից մեկը: Լաստիվերցին ջանում է իր պատմութ-յան մեջ հերքել Անիի անկման՝ Պետրոս Գետադարձի և նրան հարող «բյուզանդամետ» խմբակի կողմից զար-գացված տեսակետը: Նույն իրողությունների համար ներկայացնելով հավելյալ մանրամասներ՝ նա ձգտում է

[32] **Մխիթար Անեցի.** 1983, 73:

ներկայացնել մի պատում, ըստ որի Գագիկ Բ-ն թուլամորթ չէր, Պետրոս Գետադարձը բնավ պետականամետ գործիչ չէր, իսկ Վեստ Սարգիսը ոչ թե փառավոր մեկենաս էր, ինչպես գրում է Անեցին, այլ Բագրատունյաց անկմանը խորապես նպաստած գործիչ: Ավելացնենք, որ Լաստիվերցու «Պատմության» մեջ արտահայտված քաղաքական մտայնությունը որոշակի հասարակական շերտի մտածողություն էր:

Վերջում նշենք, որ գաղափարական այս հակամարտի խորքային բնույթի առհավատչյան է տարիներ անց հեռավոր Կիլիկիայում դրա ծավալումը: Մասնավորապես, հայ ազնվականության գաղթից հետո՝ XII դ. 20-30-ական թվականներին, երբ Կիլիկիայում տեղի ունեցավ հայկական իշխանությունների որոշակի կայունացում, նկատելի դարձավ Ռուբինյանների և լամբրոնացի իշխանների միջև քաղաքական մտածողության ցցուն մի տարբերություն: Առաջինները վարում էին Բյուզանդիայից առանձնանալու քաղաքական գիծ, մինչդեռ երկրորդները հավատարմորեն ծառայում էին Բյուզանդիային: Ավելին, Հովհան Բ Կոմնենոսի (1118-1143) դեպի Կիլիկիա արշավանքի ժամանակ նրանք նեցուկ էին Բյուզանդիային՝ ընդդեմ Ռուբինյանների: Այս փաստը նկատի առնելով է, որ մեր առջև բացվում է Կիլիկյան միջավայրի մի նոր տեսարան: Փաստորեն, այստեղ է «գաղ-

թել» ոչ միայն XI դ. հայ հասարակական կառույցը[33], այլև նրա քաղաքական գաղափարախոսությունը՝ իր ներքին հակամարտով, որ գալիս է դեռ առնվազն XI դ. կեսերից: Այս լույսի տակ կարելի է ենթադրել, որ Գագիկ Բ-ին սպանած Մանդալեի եղբայրներից վրեժի լուծումը Ռուբինյանները հանրայնացրել են ոչ միայն ելնելով Բագրատունյաց ժառանգ դիտվելու դրդապատճառից[34], այլև ի սկզբանե էլ եղել են թագավորության անկմանը դեմ գործիչներից, ինչպիսիք էին Վասակ Պահլավունին և նրա համակիրները:

Գրականություն

Արիստակէս Լաստիվերցի 2012, Պատմութիւն, աշխ. Գ. Մանուկեանի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ., Երևան, էջ 523-633:

Բարթիկյան Հ. 1988, Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնոմախ, «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 1, Երևան, էջ 77-84:

Լեո 1967, Երկեր, հ. 2, Երևան, 786 էջ:

Խաչիկյան Լ. 2012, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, «Աշխատություններ», հ. Ա, Երևան, էջ 165-200:

Հայ ժողովրդի պատմություն 1976, հ. III, Երևան, 1023 էջ:

Հայոց պատմություն 2014, հ. II, գիրք II, Երևան, 800+24 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական

[33] **Mutafian.** 2012, 53. **Մալխասյան.** 2020, 43:

[34] Հմմ. **Տեր-Պետրոսյան** 2007, 202 (տողատակ 63):

մտքի պատմության, գր. Ա, Երևան, 524 էջ:

Մաթեւոսյան Կ. 2005, Հովհաննես Սարկավագի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու, «Հայոց պատմության հարցեր», № 6, էջ 122-131:

Մաթեւոսյան Կ. 2015, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երևան, 144 էջ:

Մալխասյան Մ. 2020, Հայոց պատմություն–2. Դասախոսություններ, Երևան, 51 էջ (ձեռագրի իրավունքով):

Մանանդյան Հ. 1977, Երկեր, հ. Գ, Երևան, 504 էջ:

Մխիթար Անեցի 1983, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխ. Հ. Մարգարյանի, Երևան, 140 էջ:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ 2014, Ժամանակա–գրութիւն, աշխ. Կ. Մաթեւոսյանի, Երևան, էջ 502:

Տեր-Պետրոսյան Լ. 2007, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 670 էջ:

Օրմանեան Մ. արք. 2001, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1870 էջ:

Марр Н. Я. 1895, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, «Восточные заметки», Санкт-Петербург, с. 9-34.

Andrews 2017, Matteos Urhayeci and His Chronicle: History as Apocalypse in a Crossroads of Cultures, Leiden/Boston, 272 p.

Mahé J-P 1991, Basile II et Byzance vus par Grigor Narekac'i, "Traveaux et Memoirs", n. 11, pp. 555-574.

Mutafian C. 2012, L'Arménie du Levant (XI-XIV siècles), t. I, Paris, p. 736.

Арег А. Варданян, *Ереванский государственный университет, аспирант,* **Аристакес Ластиверци и два направления армянской историографии XI в.**

Резюме

Традиционно армянская историография освещала события правления царя Гагика II (1041-1045) на основе информации Аристакеса Ластиверци. Цель данной статьи – показать, что в середине XI века существовала и другая традиция освещения правления Гагика II, во многом отличающаяся от Ластиверци. В частности, сведения поздних авторов (Самуел Анеци, «Видение» Ованнеса Козерна) позволяют предположить наличие идейных разногласий между Ластиверци и представителями другой традиции. Если Ластиверци был представителем «патриотической» партии, то существовала также историческая традиция, связанная с так называемой «провизантийской» партией. Вероятно, источником этой традиции был утерянный исторический труд Ованнеса Козерна. Идеологическая борьба «патриотической» и «провизантийской» партии нашла свое отражение и в Киликии.

Ключевые слова: Аристакес Ластиверци, Самуел Анеци, Ованнес Козерн, Падение Ани, Армения в XI веке, Рубениды.

Areg A. Vardanyan, *Yerevan State University, Ph.D student,* **Aristakes Lastivertsi and Two Trends in 11th-Century Armenian Historiography**

Summary

For a long time, Armenian historiography has interpreted the rule

of Gagik II (1041-1045) through the lens of the *History* of Aristakes Lastivertsi. This article aims to show that in the 11th century, an alternative historiographical tradition emerged that significantly contrasted with Lastivertsi. We can trace its main tenets through a careful analysis of later sources at our disposal (Samuel Anetsi, *Apocalypse* of Hovannes Kozern). In short, the two historiographical traditions interpreted the events of Bagratid decline in light of the partisan confrontation active at that time, with Lastivertsi leaning to the so-called "patriotic" party, while the other tradition being more sympathetic to the Byzantine perspective. Most probably, this other source was the now-lost *History* of Hovahnnes Kozern. It is also worth noting that the ideological struggle between the "patriotic" and "pro-Byzantine" parties eventually "migrated" with the Armenian society into Cilicia.

Key words: Aristakes Lastivertsi, Samuel Anetsi, Hovhannes Kozern, Fall of Ani, Armenia in 11th century, the Rubenids.